


Տարեկան 1927

Հունիս 1920

ԵՐԻԱՆ ՄՈՂԿՈՒՔԻ



ԳՐԹՈՅՆ 1

(Ապրումներ)

Ս. ԵՐԻԱՆ ՄՈՂԿՈՒՔԻ

1916

891.99

Մ-26

APM.
H 2-60982

891.99
5-26

2-60982


ԵՐԻԱՆԴ ՄԱՆԿՈՒՆԻ

ՊՐ

NOV 2011

AN-1927

ՈՎՍԱՆՆԱ



ԳՐԲՈՅՑ 1

(Ապրումներ)

ԻՆՎ. № 20668

Ա. Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

ԵԼԵՔՏՐԱԿԱՐԺ Տպարան Մայլ Աթոռոց.

1915

24 JUN 2013

41850

1105 VOK

Ա Յ Ժ Յ Ո Ւ Թ Ա



ԳՐՔՈՑԿԱՆ ՆԻՒՐՈՒՄ ԵՄ

ՏԻՐՈՒՀԻ ԱՍՏղԻԿ
ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

ՎԱՂԱՄԵԴ ՑԻՇԱՏԱԿԻՆ

ՀԵՂԻՆ ԱԿ.



39771-63

X

5

Դ է Պ ի Վ ե ր

Ու միշտ գէպի վեր ձգտում է հոգիս,
 Դէպի եթերը, վսկը ու անհուն,
 Դէպի ամպերը՝ կապուտակ երկինք,
 Ամեն ինչ սիրուն, շողուն, հըմայուն,

Վերևում կուզեմ գրկել առաջերը,
 Գրկել ամպերը, արև ու լուսին.
 Գերւել բնութեան տարրերով փայլուն,
 Թողէք թռչեմ ես եթերը սիրուն.

Այնտեղ ապրում է առաքինութիւն,
 Այնտեղ է ձգտում միտքս աննկուն,
 Ներքնում կեղծիք չարանենգութիւն,
 Ամենուրեք սին փառամոլութիւն.

Այնտեղ կըանամ կուքծքս վիրաւոր,
 Յաւ ու հառաջանք ժահրուտ աշխարհի,
 Այնտեղ չեմ լինիլ տիտուր, վշտալի,
 Ինձ հետ կլինին շողերը լուսնի.

Դ Ա Ի Գ Ն Ա Ց Ի Բ .

Դու գնացիր... ինձ թողեցիր,
Մոլոր, տխուը վշտալի,
Արտասուքի աղբիւը բացիր,
Ռվ իմ ընկեր անձկալի:

Դու գնացիր, ինձ տւեցիր
Կրծքիդ վարդը փարելի,
Կրծքիդ վարդը, միս իմ դարդը
Կըխոցոտի իմ հոգին:

Ու էն վարդը, թոռմած, թօշնած,
Զրկւած սիրուն քո կրծքից
Մըմունջ, տրտունջ կերգէ հիմի
Կկենայ միշտ աղօթքի:

Գերեզմանդ այցելեցի
Ռվ իմ ընկեր սիրելի,
Արտասուքով քեզ պատմեցի,
Դու լսեցիր դառնալի:

Գերեզմանից դու ձայնեցիր,
«Պահիր վարդս քո կրծքին,
Պահիր վարդս և իմ դարդս,
Էլ անզօր է իմ հոգին»:

Արտասուքով դու թրջեցիր
Մահիճդ այն թախծալի,
Ու սգացիր շատ ողբացիր,
Բայց լսեցիր դու կրկին:

ԿՈՒԶԵՒ ԼԻՆԵԼ

Կուզէի լինել ես հեքը սրտիդ
Որ միշտ անբաժան քեզ հետ լինէի,
Կուզէի լինել խոհերը մտքիդ
Քեզ հետ ապրէի, կրկին խորհէի:

Գիշերւայ պահի, էն վեհ ժամերին,
Յիշնւմ ես ընկեր դու մեր անուրջներ,
էն քաղցր անուշ վառ արշալոյսին
Յիշնւմ ես անցած դարձած ըոպէներ:

Յիշնւմ ես թէ մենք ինչպիսի սիրով,
Գրկում, գրկում էինք կարօտով,
Անցան էն օրեր, աւաղ էն ժամեր.
Անցան ու դարձան այժմ երազներ:

Ու էն երազներ թարմ ու թրթուն,
Առկայծում են դեռ սրտիս խորքերում,
Ու դեռ շատ երկար ռվ անզին ընկեր,
Կըմնան նրանք թարմ ու անստեր:

~~Բ Ո Ղ Ո Ք~~

Ազատ համարձակ ապրել կուզէի
Որպէս շուշանը լայն դաշտում բուսած,
Ու այս շղթաներ փշրել կուզէի,
Կրծքիդ հանգչէի՝ քո սիրով տարւած:

Ի՞նչու մեղ բախտը զրկեց հմայքից,
Ճակատագիրը բաժանեց մեզի,
Զէ որ երկուսը դեռ սիրող սրտեր,
Ապրել կուզէինք տանջանքից հեռի:

Ի՞նչու մեղ կեանքը տանջանք պարզեց,
Առանց վայելքի, միմեանցից հեռի,
Ի՞նչու մեղ բաղդը այսպէս կաշկանդեց,
Միթէ վայելքի չէինք արժանի:

Բողնք ու անէծք անգութ բնութեան,
Դէպի անիմաստ կեանքի օրէնքներ.
Բողնք հուր ու սուր խղճուկ մարդկու-
թեան
Թէ չխորտակեն անմիտ օրէնքներ:

~~Ո Ւ Բ Ի Կ Ի Ն~~

Ու բարեներ տխուր խոհեր
Կուղարկեմ իմ բալիկին,
Որ նա ապրի, շուտ մեծանայ
Ու գայ մօտ իր հայրիկի:

Այս, Էն Աստուած վատ բան արաւ,
Խլեց նրա մայրիկին,
Առանց նրա շատ տխուր է
Սրեւ օրը Ռաֆիկի:

Մի տխրիր իմ սիրուն բալաս,
Դու չես նման որբիկի,
Քո մայրիկի վերջին հառաչք
Միշտ կան վերև քո գլխին:

Ու էն հառաչք, մրմունջք աղօթք,
Որք կան վերև քո գլխին,
Կլինին պահակ մանուկ սրտիդ,
Կըուրբեն քո չորս դին:

ԶԱՏԿԱԿԱՆ ՆԻԷՐ օր. Ս -ին

Ու էս Զատկի վառ օրերին,
Միայն այս եմ նորում,
Մի փունջ մտքեր. անկեղծ խօսքեր
Ահա ինչ եմ քեզ ձօնում:

Կմաղթեմ քեզ այս սուրբ Զատկին
Երկար կեանք մի բուրաւէտ,
Որ դու ապրես, ծլես, ծաղկես,
Լինիս մարգ մի պտղաւէտ:

Մաղթում եմ քեզ որ դու ապրես,
Ապրես, տեսնես լաւ օրեր,
Երջանկութիւն ու իմ սէրը
Թող լինի քեզ միշտ ընկեր:

Նպատակդ վեհ ու սիրուն
Բոյդ նազան ու չինար,
Կեցցես դու միշտ անգին ընկեր,
Կեցցես, կեցցես յաւիտեան:

ԳԱՐՈՒԿՆ ՔԻՆ

Եկաւ դարուն, սիրուն գարուն,
Բացւեց վարդը մայիսի,
Բացւեց բուրեց իր չորս բոլոր
Անուշ հոտը վառ ծաղկի:

Սոխակն իր խոր քնից զարթեց
Քաղցր երգեց մեղեղին,
Վարդը իր լայն թևեր բացեց
Իր գիրկն առաւ Սոխակին:

Ու շատ երկար գրկախառնած,
Սոխակն ու Վարդ միասին,
Երգում էին ուրախ, գւարթ,
Երգում, ցնծում բերկրալի:

Բայց հեռու չէր ձմեռ դաժան,
Եկաւ տարաւ վարդենին,
Ու Սոխակի խօսուն լեզւին
Դրեց կոփած բանալին:

ՔՈՒՆ ԽԱՆԴԱՄՈՂԻՆ

Գիշերւայ պահին, էս ուշ գիշերին
Թնդ եմ միշտ յիշում, իմ անգին ընկեր.
Խնչու ինձ դու գլխ այս ուշ գիշերին
Հանգիստ չտփրիմ յոգնած կրծքին:

Նա բարախում է ու գեռ կըծկըւում,
Անխարջախ սիրոյ համբոյրից արբած,
Նա դեռ չի դազգել. նա գեռ պիտ ապրի,
Որքան էլ լինի հեռու՝ բաժանւած:

Անդադրում ու լուս միշտ քեզնով տալւած,
Ես սպասում եմ գարնան գալուստին,
Ես հաւատում եմ կենսաբեր ժամին,
Նա դեռ պիտի գայ ու գեռ չէ մարած:

Թէ մի սոսկ հայեացք, ով իմ դիցուհի,
Կամ մի լուռ նայւածք քաղէի քեզնից,
Նա կմարէր իմ հրդեհն ամեհի,
Նա կմարէր իմ ծարաւ ու կսկիծ:

ԽՈՐՏԱԿԻԱՄԾ ՍԷՐ

Գաբունն էլ եկաւ. սիրոս լալագին
Դեռ էլի տխուր կերգէ մեղեղին,
Ծաղկունքն էլ բացւան հաւքերը կրկին,
Եկան մեր աշխարհ երգով թնդալի:

Ծաղկունք ու հաւքեր չեն մխիթարի,
Դարդից ծով դառած սիրոս տխրալի,
Վարդեր ու դաշտեր ինձ չեն գրաւի,
Քանի որ քեզնից գտնւեմ հեռի:

Լուսին ու աստեղ քամին զովագին,
Զեն որ պիտ լցնեն անդունդ ամենի,
Վարդ մարգագետին, արեգ նազելի
Զեն կարող բուժել լիբքս ահոելի:

Ու ոգեորիչ կարկաչը գետի,
Ինձ երբէք, երբէք էլ չեն հմայի,
Շուշան. Թանիշակ Յասմիկ սիրելի,
Ոչինչ հն ինձի, երբ դու ես հեռի:

Միայն խաւարը տխուր գիշերի
Երբ չկան արև, աստեղը ու լուսին,
Երբ գոյն ու մթին ամպերն ամեհի
Մէկով պատում են երկինք տխրալի.

Օ՛, այն ժամ միայն տխուր մեղեդիս
Ներդաշնակ ու զիլ ինձ կփայփայի.
Ու մեր սրտերը տւած ձեռ ձեռի
Կերթան շատ հեռու հալածւած բախտից՝

Տխուր ու փշուր երգով դառնագին
Գտնելու իրենց խաչը տանջանքի:

Կ Ա Յ Ծ.

Մոխիբներում թագնւած կայծը,
Օ՛, կոյս նորէն վառեցիր,
Դու իմ սրտի անցած սէրը,
Նորէն ուժգին յարուցիր:

Ուխտել էի ես այդ սէրը,
Պահել սղմած իմ կրծքում,
Պահել յաւէտ, պահել անվերջ,
Մինչև մարէր կեանքս անհետ:

Բայց դու նորից ինձ կեանք տւիր,
Ինձ ապրեցրիր աշխարհում,
Ինձ յոյս տւիր, ինձ ոյժ տւիր
Անյոյս տխուր իմ կեանքում:

ՄԻԱՅՆ ՔԵԶ ՀԱՄԱՐ

Միրտս տխուր, սիրտս թնդում,
Բարախում է քեզ համար,
Ու միալար ապրում է նա,
Միայն, միայն, քեզ համար:

Դեռ քեզ համար նա շատ կապրի,
Կասկածում ես, աննման,
Զլո որ մեր այն խոստումները
Պիտի մնան յաւիտեան:

Մինք երկուսս հօ երդւել ենք
Գիշերը վառ լուսնի տակ,
Միրել սրտով անդաւաճան,
Միրել մինչև յաւիտեան:

Էլ բնչու են կասկածներդ,
Ո՞վ իմ հրեշտակ պահապան,
Թէ բաւական չէ խոստումս,
Կուզես խօսքիս գրաւակմն:

Առ գրաւական սիրող սիրտս
Նւիրում եմ աղաւնիկ,
Որ էլ երբէք չկասկածի
Ու չտխրի քո հոգին:

Սիրտս տխուր, սիրտս թնդում,
Բարախում է քեզ համար,
Ու միալար ապրում է նա
Մեայն, միայն, քեզ համար:

ՀՐԱԺԵՇՏԻՑ ՅԵՏՈՅ.

Մենակ նստած ու մտախոհ,
Քեզ եմ յիշում վշտահար,
Միրոյ ժամերն այն վաղանցուկ,
Միտս են գալիս անդադար:

Ցիշում եմ ես այն գիշերը,
Երբ մենք մոլար ու տխուր,
Պիտի տայինք վերջին հրաժեշտ,
Անջատւէինք մենք յաւէտ:

Ու խաւարը այն գիշերի
Քեզ բաժանեց ինձանից,
Ու պատկերդ, չքնաղ քուրիկ,
Անհուր այրեց իմ հոգին:

* * *

Անցնում են օրեր, շատ անձուկ ժամեր,
Անցնում են գնում անդունդն անհետ,
Նրանց հետ տխուր խոներս անվերջ,
Գալիս են քեզ մօտ բերելու բարեւ:


Ու միշտ այն վայրը, որտեղ դու ապրես,
Որտեղ դու կոխես հողը մայր երկրի,
Ես կըկոչեմ այն վայր պաշտամունքի,
Իսկ քեզ սիրելի, մի վեհ դիցուհի:

39771-63

ԿՈՑՄԻ ՍԵՐ

Գըլգըլալէն ջուրն է հոսում էն սարից
Տեսէք, ով է գալիս հեռու էն տեղից,
Ուսին սափոր, ձեռքին բռնած, մի փնջիկ,
Կոյսն է գալիս, հեռու, հեռու էն տեղից:

Նա գալիս է տխուր, տրտում մոլորւած,
Միրած եարի անոյշ բոյրից արքեցած,
Նա գալիս է, յետ է նայում վրդովւած,
Անիծում և ճամփատագրիրը հալածւած:



Նա շատ հեռու թողեց հարի անուշ սէր,
Զահիլ տղի անյոյս տխուր սիրուը բեկ.
Նա գալիս էր, նա տենչում էր կրկին սէր,
Այդ բոլորից շատ հեռու էր կոյսը ճէզ:
առևանա ճշճորմա նույը ո՛վ նոսքալի
Հային պահանջում ուժ դասոյ
ազայ այժմց ուն բաց ո՛վ այցաք

ազայ առ բայց պայման այս այժմ ո՛վ
այժմց դայն զրու սեխով առ բայց
ճշճունաչայ դայն այս նախույը ո՛վ
այժմց պահանջում է կենթի ՍՏՐՈՒԿ բայ

կեանքը մի երաղ՝ մինք նրա ստրուկ,
Գնում ենք՝ լսում նրա հրաման,
Ու որպէս անզօր դասալիք զինուր,
Պատրաստ ենք ընկնել նրա սոքի տակ:

Բայց նա անողոք ու բիրտ գատաւոր,
Չի լսում լացդ, հառաջնաքդ մարդ,
Անթարթ աչքերը դէպի քեզ դարձած,
Հեղնում, ծաղրում է քո նողատակ:

ճառայրին ճառույս պայման է այսուր ու
ճարդոյս պայման պայման ճառին ճառին
ճառ ժորից նայում լուս է այսուր ու
ճառաբարու զոհուառուան է նառինին

ԱՆԱՊԱՏՈՒՄ

Տխուր է շուրջու, տխուր, ամայի՛,
Որպէս անապատ մեծ Արաբիայի,
Ուր չկայ անգամ նշոյլը կեանքի,
Ուր կամքս է մհուած, հոգիս թախծալի:

Երջում հմ տխուր այդ անապատում,
Անցնում ու տարւում անցեալ, յուշերով
Ներկաս գառնում է տխուր վշտալի,
Ապագաս հեռու, անշշմարելի:

Ո՞րքան սիրուն էր անցեալը կրկին,
Որքան քաղցր էր այն կեանքը, Տէր իմ,
Ի՞նչու զրկեցիր այդ փառքից փայլուն,
Ի՞նչու լալսպին թողիր ինձ բնութիւն:

Բայց այն մեծ յոյսը, որ է իմ հաւատ,
Միշտ կայ կենդանի իմ աչքի առաջ,
Նա ամեն ժամին անբաժան ինձնից,
Լոյսի վեճ ջահով կգծէ ուղիս:

Նա է ապրեցնում ինձ անապատում,
Նա է շունչ տալիս անշունչ դեակին.
Նա զեկավարում է մարդկանց այս կեանքում,
Ո՞վ յոյս, քեզ ենք, քեզ ապաւինում:

* * *

Էս աշխարհի բարիք ասած
Բանը երբէք չտեսայ.
Չորս դիս ցաւ վիշտ ու տիլութիւն,
Ահա ինչեր ես տեսայ:

Կարծես Աստուած անբաւական,
Ու միշտ դժգո՞ն ինձանից,
Վշտուտ օրեր ցաւոտ օրեր,
Զի ինսայում ինձանից:

Ու գալիս են Էս բոլորը
Շարան—շարան թանձրալի.
Ու պատում են տիսուր հոգիս,
Խորթացնում ինձ աշխարհից:

Ես աշխարհի խորթ զաւակն եմ,
Ես փայ չունեմ այստեղից,
Եկէք օրեր, վշտուտ օրեր,
Ցաւեր բերէք բոլորից:



91850

Շուտով լոյս կտեսնի նոյն հեղինակի
«Ն Բ Ա Մ Ա Հ Ը Ը» պէսլիկը.



Վաճառած գրքոյների ամբողջ արդիւնքը
յատկացրւում է հայ կամաւորների օգտին:

Պահևատը Մայր Աթոռի Տպարանում: